



Հանձնաժողովի՝ շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը տանող անդամի գործառույթները (Ընտրական օրենսգիրք՝ հոդված 66)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 9-ից և ավարտվում է ժամը 19-ին:

- Զվեարկության օրվա ժամը 9-ից հանձնաժողովի նախագահը պետք է Ձեզ փոխանցի.
 - ✓ շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը ցուցակը,
 - ✓ ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված անհրաժեշտ քանակությամբ ընտրական քվեաթերթիկներ,
 - ✓ հատուկ ծրարներ,
 - ✓ գմռասկնքված շրջիկ (տեղափոխվող) քվեատուվիը, որում գետեղված է ստուգողական թերթը:
- Ընտրողին մոտենալիս խնդրե՛ք նրան ներկայացնել.
 - ✓ Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
 - ✓ հարկադրաբար վերաբնակեցված անձի՝ տարհանվածի, դեպքում՝ տարհանվածի վկայականը, Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականի կամ Վրաստանի քաղաքացու անձնագրի հետ:
- Համեմատե՛ք ընտրողի անձնական համարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի ցուցակում ընդգրկված անձնական համարի հետ:
- Շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի ցուցակում ստորագրությամբ վավերացրե՛ք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելը:
- Խնդրե՛ք ընտրողին շրջիկ (տեղափոխվող) քվեատուվի ցուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հավաստել ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները ստանալը:
- Ընտրողին փոխանցե՛ք, ընտրողների գրանցումն իրականացնողի ստորագրությամբ և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված, ընտրական քվեաթերթիկը/ քվեաթերթիկները:
- Ընտրողի կողմից քվեաթերթիկը լրացնելուց հետո, նրան փոխանցե՛ք հատուկ ծրարը և ցուցում տվե՛ք, որ նրա մեջ գետեղի ծալված ընտրական քվեաթերթիկը/քվեաթերթիկները:

- Ընտրողին խնդրե՛ք ծրարը գցել շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուևիի մեջ:
- Զվեարկության ավարտից հետո շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի ճեղքն այնպես գմռասակնքե՛ք, որ անհնար լինի, առանց գմռասակնիքը վնասելու, այն բացել:
- Ոչ ուշ, քան քվեարկության օրվա ժամը 20-ը շրջիկ (տեղափոխվող) ընտրական քվեատուևիը վերադարձրե՛ք ընտրական տեղամաս:
- Զվեարկության շենք վերադառնալուց հետո, հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք չօգտագործված ընտրական քվեաթերթիկները և հատուկ ծրարները: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- Եթե խախտվել է շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի գմռասակնիքի ամբողջականությունը, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին: Կազմե՛ք համապատասխան արձանագրություն (կշե՛ք պատճառը) և ստորագրե՛ք Ձեզ ուղեկցող անձանց հետ մեկտեղ: Սպասե՛ք հանձնաժողովի նախագահի հետագա ցուցումներին:
- Շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի միջոցով քվեարկությանը մասնակցող ընտրողների հանդեպ չի կիրառվում նշմարման ընթացակարգ:
- Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, ցուցո՛ւմ տվեք, որ ստորագրի նույն սյունակում: Բացի այդ, նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողի անվան և ազգանվան մատնանշմամբ):
- «Ֆիզիկական վիճակի» պատճառով ընտրողի կողմից շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի միջոցով քվեարկության դեպքում, շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում արեք՝ գրառում՝ «Ֆիզիկական վիճակ» և հավաստե՛ք ստորագրությամբ:
- «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողի (նաև այն ընտրողի, որն ինքնուրույն չի կարող լրացնել ընտրական քվեաթերթիկը) փոխարեն, նրա ներկայությամբ, ընտրական քվեաթերթիկը լրացնում, հատուկ ծրարի մեջ է գետեղում և ծրարը շրջիկ (տեղափոխվող) քվեատուևիի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը (բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցի ներկայացուցչի և դիտորդի):